ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ԿՀԳԿ-ԳՀԱՊՁԲ-25/16 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **09 դեկտեմբերի 2025թ.**

2025թ. նոյեմբերի 12-ից դեկտեմբերի 09-ը ՀՀ, ք. Երևան, Պ. Սևակի 7 հասցեում գտնվող՝ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի գրասենյակում, տեղի ունեցավ լաբորատոր նյութերի և սարքավորումների ձեռքբերման ԿՀԳԿ-ԳՀԱՊՁԲ-25/16 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Տ. Աբգարյան՝ | «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնտեսական գծով փոխտնօրեն, |
| Գ. Կարագյան՝ | «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար գիտաշխատող, |
| Հ. Գևորգյան՝ | «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի մոլեկուլային մակաբուծաբանության լաբորատորիայի վարիչ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Տ. Աբգարյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՒՈՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Էլոյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված թիվ 1 Հավելվածով Գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:
3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին՝ դրանց համապատասխանության մասին:
4. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

5. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

6. Ընթացակարգի շրջանակում հրապարակվող հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ի նախագծ/եր/ը հաստատելու և անգործության ժամկետի մասին:

7. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

8. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. նոյեմբերի 12-ին, ՀՀ, ք. Երևան, Պ. Սևակի 7 հասցեում գտնվող «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի գրասենյակում ժամը 11:30-ին Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված նախահաշվային արժեքը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1-ին | Կաթոցիկի ծայրակալ | 4000 |
| 2-րդ | Կաթոցիկի ծայրակալ | 6000 |
| 3-րդ | Կաթոցիկի ծայրակալ | 4000 |
| 4-րդ | Փորձանոթ՝ կախովի կափարիչով | 8000 |
| 5-րդ | Փորձանոթ՝ կախովի կափարիչով | 4000 |
| 6-րդ | Փորձանոթ՝ կախովի կափարիչով | 2000 |
| 7-րդ | Մանրադիտակման համար նախատեսված Ազուր էոզին ներկանյութ | 10000 |
| 8-րդ | Լաբորատոր կաթոցիչներ | 36000 |
| 9-րդ | Լաբորատոր կաթոցիչներ | 24000 |
| 10-րդ | Լաբորատոր կաթոցիչներ | 12000 |
| 11-րդ | Լաբորատոր կաթոցիչներ | 12000 |
| 12-րդ | Պլաստիկե լաբորատոր պարագաներ | 4000 |
| 13-րդ | Ապակյա լաբորատոր պարագաներ | 1500 |
| 14-րդ | Ապակյա լաբորատոր պարագաներ | 500 |
| 15-րդ | Փորձանոթ պտտակավոր կափարիչով | 15000 |
| 16-րդ | Քիմիական ռեակտիվ | 1000 |
| 17-րդ | Քիմիական ռեակտիվ | 2500 |
| 18-րդ | Պլաստիկ լաբորատոր պարագաներ | 15000 |
| 19-րդ | Պլաստիկ լաբորատոր պարագաներ | 3000 |
| 20-րդ | Լաբորատոր կաթոցիչ | 50000 |
| 21-րդ | Լաբորատոր կաթոցիչ | 50000 |
| 22-րդ | Փոփոխական ծավալի պիպետ | 50000 |
| 23-րդ | Արտաքին սնուցման բլոկ՝ համատեղելի Axio Imager մանրադիտակների հետ հալոգենային և LED լույսի համար, CAN արձանագրությամբ, կայունացված: | 650000 |
| 24-րդ | Վերալիցքավորվող մարտկոց | 150000 |

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց տեղեկատվություն գրանցամատյանում կատարված նշումների մասին և Հանձնաժողովի նախագահին փոխանցեց հայտերի

գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | Ք. Երևան, Ռոստովյան 13/18շ., բն. 94 | 041551616 | animedllc@mail.ru | 09221601 |
| 2 | «Հասմիկ Օհանյան» ԱՁ | ՀՀ, ք. Երևան, Վրացական 4-րդ նրբ., 5շ., բն.22 | 055594906 | ara555@mail.ru | 20060696 |
| 3 | «Բիո գամա» ՍՊԸ | Ք. Երևան, Անդրանիկ 158շ., բն. 25 | 093938316 | info@biogama.am, biogama29102013@gmail.com | 00128346 |
| 4 | «Պրիմա Լաբ» ՍՊԸ | Ք. Երևան, Հր. Ներսիսյան փ., 6շ., 4 բն. | 095543078 | pprimalab@gmail.com | 08256775 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ պարունակող ծրար/ներ/ը կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակից/ներ/ի կողմից ներկայացված հայտ/եր/ը կազմված և ներկայացված է/են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, և բացեց համապատասխան գնահատված հայտ/եր/ը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 3. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ՝ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը Ընթացակարգի հրավերով /այսուհետ՝ հրավեր/ սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

**«ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ-ի**, ում ներկայացվող «Դիմում-Հայտարարություն» փաստաթղթում բացակայում է սպասարկող բանկի և բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունը:

**«Հասմիկ Օհանյան» ԱՁ-ի**, ում ներկայացվող «Դիմում-Հայտարարություն» փաստաթղթում բացակայում է սպասարկող բանկի և բանկային հաշվեհամարի վերաբերյալ

տեղեկատվությունը, ինչպես նաև 9-րդ չափաբաժնի մասով «Արժեք» և «ԱԱՀ» դաշտերի գումարը չի համապատասխանում «Ընդհանուր գինը» դաշտում նշված գնին:

**«Բիո գամա» ՍՊԸ-ի**, ում կողմից Հավելված 1.1-ով ներկայացվող «Առաջարկվող ապրանքի նկարագիր» փաստաթղթում Ընթացակարգի ծածկագիրը նշված է «ԿՀԳԿ-ԳՀԱՊՁԲ-25/04», մինչդեռ սույն Ընթացակարգի ծածկագիրն է «ԿՀԳԿ-ԳՀԱՊՁԲ-25/16», **ինչպես նաև «Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» փաստաթղթում 24-րդ չափաբաժնի մասով տեխնիկական բնութագիրը չի համպատասխանում Ընթացակարգի հրավերի պահանջներին, մասնավորապես առաջարկվել է՝** «Մարտկոցի չափը՝ AA, ունակությունը՝ 2400մԱժ, լարումը՝ 1.2Վ, մարտկոցի տեսակը՝ Ni-Mh», սակայն հրավերով պահանջվել է՝

«Մոդել -AA

Մարտկոցի տեսակ- Ni-Mh, նիկել-մետաղաջրածնային

Մարտկոցի տեսակը և չափը- AA; LR6; R6

Մարտկոցի տարողություն - 2300-2700 միլիամպեր-ժամ

Վոլտ- 1,2վ

Լիցքավորումների քանակ – 2000-2500 անգամ

Քաշ - 28 գ +-2

Դասակարգում - վերալիցքավորում»:

**«Պրիմա Լաբ» ՍՊԸ-ի**, ում ներկայացվող «Դիմում-Հայտարարություն» փաստաթղթում բացակայում է սպասարկող բանկի և բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գնման գինը | Մասնակիցների կողմից առաջարկված գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | անվանումը | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1-ին | Կաթոցիկի ծայրակալ | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | 4000 | 2840 | 568 | 3408 |
| 2-րդ | Կաթոցիկի ծայրակալ | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | 6000 | 4260 | 852 | 5112 |
| 3-րդ | Կաթոցիկի ծայրակալ | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | 4000 | 2920 | 584 | 3504 |
| 4-րդ | Փորձանոթ՝ կախովի կափարիչով | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | 8000 | 5840 | 1168 | 7008 |
| 5-րդ | Փորձանոթ՝ կախովի կափարիչով | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | 4000 | 2920 | 584 | 3504 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 6-րդ | Փորձանոթ՝ կախովի կափարիչով | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | 2000 | 1550 | 310 | 1860 |
| 7-րդ | Մանրադիտակման համար նախատեսված Ազուր էոզին ներկանյութ | - | 10000 | - | - | - |
| 8-րդ | Լաբորատոր կաթոցիչներ | «Համիկ Օհանյան» ԱՁ | 36000 | 27000 | 5400 | 32400 |
| | | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | 36000 | 29550 | 5910 | 35460 |
| 9-րդ | Լաբորատոր կաթոցիչներ | «Համիկ Օհանյան» ԱՁ | 24000 | 18000 | 36000 | 21600 |
| | | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | 24000 | 19700 | 3940 | 23640 |
| 10-րդ | Լաբորատոր կաթոցիչներ | «Համիկ Օհանյան» ԱՁ | 12000 | 9000 | 1800 | 10800 |
| | | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | 12000 | 9850 | 1970 | 11820 |
| 11-րդ | Լաբորատոր կաթոցիչներ | «Համիկ Օհանյան» ԱՁ | 12000 | 9000 | 1800 | 10800 |
| | | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | 12000 | 9850 | 1970 | 11820 |
| 12-րդ | Պլաստիկե լաբորատոր պարագաներ | - | 1000 | - | - | - |
| 13-րդ | Ապակյա լաբորատոր պարագաներ | - | 1500 | - | - | - |
| 14-րդ | Ապակյա լաբորատոր պարագաներ | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | 500 | 400 | 80 | 480 |
| 15-րդ | Փորձանոթ պտուտակավոր կափարիչով | - | 15000 | - | - | - |
| 16-րդ | Քիմիական ռեակտիվ | - | 1000 | - | - | - |
| 17-րդ | Քիմիական ռեակտիվ | - | 2500 | - | - | - |
| 18-րդ | Պլաստիկ լաբորատոր պարագաներ | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | 15000 | 11800 | 2360 | 14160 |
| 19-րդ | Պլաստիկ լաբորատոր պարագաներ | - | 3000 | - | — | - |
| 20-րդ | Լաբորատոր կաթոցիչ | «Պրիմա Լաբ» ՍՊԸ | 50000 | 1666.67 | 8333.33 | 50000 |
| | | «Համիկ Օհանյան» ԱՁ | 50000 | 32400 | 6480 | 38880 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 21-րդ | Լաբորատոր կաթոցիչ | «Համիկ Օհանյան» ԱՁ | 50000 | 32400 | 6480 | 38880 |
| | | «Պրիմա Լաբ» ՍՊԸ | 50000 | 41666.67 | 8333.33 | 50000 |
| 22-րդ | Փոփոխական ծավալի պիպետ | «Համիկ Օհանյան» ԱՁ | 50000 | 32400 | 6480 | 38880 |
| | | «Պրիմա Լաբ» ՍՊԸ | 50000 | 41666.67 | 8333.33 | 50000 |
| 23-րդ | Արտաքին սնուցման բլոկ՝ համատեղելի Axio Imager մանրադիտակների հետ հալոգենային և LED լույսի համար, CAN արձանագրությամբ, կայունացված: | «Պրիմա Լաբ» ՍՊԸ | 650000 | 541666.67 | 108333.33 | 650000 |
| 24-րդ | Վերալիցքավորվող մարտկոց | «Բիո գամա» ՍՊԸ | 150000 | 150000 | 0 | 150000 |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2025թ. դեկտեմբերի 05-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.

2. 7-րդ, 12-13-րդ, 15-17-րդ, 19-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պահանջները,

3. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2025թ. դեկտեմբերի 09-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ.

Մասնակից/ներ/ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2025թ. դեկտեմբերի 09-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:

2. Հիմք ընդունելով Կարգի 67-րդ կետը՝ Պաշտոնական աղբյուրների միջոցով չստուգել մասնակցի կողմից համապատասխանելու վերաբերյալ հայտով ներկայացված հավաստման իսկությունը՝ պատճառաբանված որոշման բացակայության հիմքով,

3. «Համմիկ Օհանյան» ԱՁ-ի հայտը 9-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել հրավերի Առաջին մասի 8-րդ բաժնի 8.2 կետի պահանջների համաձայն:

4. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

5. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-6-րդ, 8-11-րդ, 14-րդ, 18-րդ | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | բավարար |
| 8-րդ, 10-11-րդ, 20-22-րդ | «Համմիկ Օհանյան» ԱՁ | բավարար |
| 9-րդ | «Համմիկ Օհանյան» ԱՁ | անբավարար |
| 24-րդ | «Բիո գամա» ՍՊԸ | բավարար |
| 20-23-րդ | «Պրիմա Լաբ» ՍՊԸ | բավարար |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2025թ. դեկտեմբերի 09-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից, որոշել և հայտարարել ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին, որոնք ներկայացված են ստորև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանում | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|
| 1-ին | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | X | 2840 |
| 2-րդ | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | X | 4260 |
| 3-րդ | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | X | 2920 |
| 4-րդ | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | X | 5840 |
| 5-րդ | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | X | 2920 |
| 6-րդ | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | X | 1550 |
| 8-րդ | «Համմիկ Օհանյան» ԱՁ | X | 27000 |
| | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | | 29550 |
| 9-րդ | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | X | 19700 |
| 10-րդ | «Համմիկ Օհանյան» ԱՁ | X | 9000 |
| | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | | 9850 |
| 11-րդ | «Համմիկ Օհանյան» ԱՁ | X | 9000 |
| | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | | 9850 |
| 14-րդ | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | X | 400 |
| 18-րդ | «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ | X | 11800 |
| 20-րդ | «Պրիմա Լաբ» ՍՊԸ | X | 1666.67 |
| | «Համմիկ Օհանյան» ԱՁ | | 32400 |
| 21-րդ | «Համմիկ Օհանյան» ԱՁ | X | 32400 |
| | «Պրիմա Լաբ» ՍՊԸ | | 41666.67 |
| 22-րդ | «Համմիկ Օհանյան» ԱՁ | X | 32400 |
| | «Պրիմա Լաբ» ՍՊԸ | | 41666.67 |
| 23-րդ | «Պրիմա Լաբ» ՍՊԸ | X | 541666.67 |
| 24-րդ | «Բիո գամա» ՍՊԸ | X | 150000 |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոնշյալը, 2025թ. դեկտեմբերի 09-ին Հանձնաժողովը որոշեց, որպես Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 4-րդ կետով ներկայացված Աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից այն մասնակիցներին, ովքեր ներկայացրել են նվազագույն գնային առաջարկ:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի ՏԵՔՍՏ/ԵՐ/Ի ՆԱԽԱԳԾ/ԵՐ/Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ և ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանը Հանձնաժողովին ներկայացրեց ընթացակարգի շրջանակում հրապարակվող հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ի նախագծ/եր/ը հաստատելու պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ 2025թ. դեկտեմբերի 09-ին Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություն չի կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագր/եր/ի նախագծ/եր/ը:

Հանձնաժողովը որոշեց, որ.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակից/ներ/ին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ սահմանված ժամկետում պայմանագիրը չստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում մասնակիցը կզրկվի պայմանագիրը կնքելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Տ. Աբգարյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Գ. Կարագյան ____________

Հ. Գևորգյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Էլոյան ____________